

Թոյլ կուտայ ա՛լ աւելի համարելու Տիրոջ տարիքը: Պատմութեան նախաբանին և ԺԴ. և ԺԵ. գլուխներուն համաձայն՝ Յովսէփ ապրած է 18 տարի Փրկչին ծընունդէն, ինչ որ կը հաստատէ ճշգեղու անոր մահուան ճիշդ թուականը որ վերև նշանակեցինք: Ծըլմարիտ է թէ այս յիշատակարանին համաձայն՝ Յովսէփ այն ժամանակ 111 տարեկան էր: Կը տեսնուի որ զրոյցը կը ներշնչուի այն մտածումէն թէ ան արդէն ծեր էր երբ ապրեցաւ Ս. Կուսին հետ: Յիշատակարաններէ կը հասկցուի որ Յովսէփ մեռած է քրիստոնէական 22 թուականին, և ըտտ Պատմութեան՝ Ապրիլ ամսուն 16 ին, այսինքն Ապրիլի սկիզբը:

Յովսէփի հոգեվարքը և մահը սրտառուչ կերպով պատմուած են նոյն անվաւերին մէջ. ան իրական արժէք մը ունի և յարմար չէ գանց ընել զայն: Յովսէփ առանց հիւանդ ըլլալու հասնելով իր վերջին օրուան, շատ արագօրէն իր հոգին աւանդեց «իր մխիթարիչին, իր ազատարարին և իր պաշտպանին» Յիսուսի բազկաց վրայ, միևնոյն ժամանակ կոչելով զԱնիկա «իր փրկիչը, իր Տէրը և իր Աստուածը, իր Հայրը եւ իրաւամբ Աստուծոյ որդին» (Պատմ. ԺԷ.):

Մարիամն ալ ներկայ էր. արտասուելով Յիսուսի հետ կը մխիթարէր Յովսէփը իր վերջին վայրկեաններուն: Տիրոջը հրամանին վրայ, Միքայէլ և Գաբրիէլ հրեշտակները եկան ընդունիլ օրհասականին հոգին եւ առաջնորդեցին զայն «այն տեղը ուր տակաւին արգարները կը բնակին» սպասելով մարդկային ազգին փրկագործութեան ժամուն:

Նազարէթի և շրջակայից բնակիչներէն ոմանք կը մասնակցէին Յիսուսի եւ Մարիամի սուգին «երբորդ ժամէն մինչև իններորդ ժամը»: Յետոյ սովորութեան